ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2017 թվականի N 401

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 3-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ ԹԻՎ 3/350 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, 2006 թվականի մայիսի 26-ի N 1022-Ն և 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1036-Ն որոշումների, Աբովյան համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 11-ի N 3-Ա և մարտի 27-ի N 36-Ն որոշումների, հաշվի առնելով Կարեն Ավոյանի համաձայնությունը (մուտք՝ 2017 թվականի մայիսի 3-ի N Ք-734).

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2009 թվականի դեկտեմբերի 25-ի N 2703776 վկայական) 3-րդ միկրոշրջանի թիվ 3/350 հասցեում գտնվող 24.99 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 24.99 քառակուսի մետր մակերեսով բնակելի նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Կարեն Ավոյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 2 600 (երկու հազար վեց հարյուր) դրամ (տարածագնահատման 7-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.26).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4 524 (չորս հազար հինգ հարյուր քսանչորս) դրամ:

4. Կարեն Ավոյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900105201777 հաշվեհամարին՝ 65 000 (վաթսունհինգ

հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին՝ 113 100 (հարյուր տասներեք հազար հարյուր) դրամ՝ հողամասի գինը.

3) համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին՝ 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար, 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Կարեն Ավոյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Ավոյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2017թ. մայիսի 11

ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2017 թվականի N 402

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածի, հաշվի առնելով Վոլոդյա Արշակի Սարգսյանի մահվան վկայականը (տրված՝ 2012 թվականի նոյեմբերի 14-ին Աբովյանի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից ԱԲ N 111264) և հիմք ընդունելով Ասյա Հունանյանի լիազորած անձ Գևորգ Սարգսյանի դիմումը (մուտք՝ 2017 թվականի ապրիլի 27-ի N Ք-703).

1. Դադարեցնել 2005 թվականի մայիսի 10-ին (գրանցված է ՀՀ Կոտայք նոտարական տարածքի նոտարի սեղանամատյանում N 1803) կնքված Աբովյան քաղաքի Ռոսիա փողոցի 14 շենքի մոտ գտնվող անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը:

2. Սույն որոշումից ծագող պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է Ասյա Հունանյանի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ասյա Հունանյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2017թ. մայիսի 11
ք. Աբովյան